րի անձեռնմխելիութիւնը խախտված է Վէրվիէի մօտ։ Ցետագայ տեղեկութիւնները ցոյց են տալիս, որ գերմանացիք աւելի առաջ են անցել։ Ապա Ասկվիտը կարդաց գերմանական դեսպանի հեռագիրը, որ վստահացնում է, թէ Գերմանիան նոյնիսկ Բելգիայի հետ զինված ընդհարում ունենալու դէպքում չի միացնի բելգիական երկիրը (հեգնական ծիծաղ)։ Գերմանիան խախտեց Բելգիայի չէզոքութիւնը սոսկ նրա համար, որպէսզի խափանէ ֆրանսիացիների արշաւանքը Բելգիայով, որ Ֆրանսիայի համար կեանքի ու մահվան խնդիր է։ Հեռագրի կարդալուց յետոյ, Ասկվիտը կառավարութեան անունից աւելացրեց. «Մենք ոչ մի դէպքում չենք կարող նայել այդ հաղորդագրութեան վրա ինչպէս բաւարար հաղորդագրութեան վրա (ծափահարութիւն)։ Մենք պահանջեցինք, որպէսզի բաւարար պատասխան տրվի դեռ մինչև կէս գիշերը (թունդ ու երկար ծափահարութիւն)։

## ՖՐԱՆՍԻԱՅՈՒՄ

(Պետ. Հեռ. Գործ.)

22 յուլիսի

ՊԱՐԻԶ.—Լիւկսէմբուրգի մինիստր-նախագահը բողոք յայտնեց ֆրանսիական կառավարութեանը, որ Գերմանիան խախտեց Լիւկսէմբուրգի չէզոքութիւնը։

Մամուլը, խօսելով գերմանական զօրքերի Լիւկսէմբուրգ մտնելու մասին, ինչպէս և ֆրանսիական սահմանն անցնելու մասին, միաբերան պնդում է, թէ, գործելով այդպէս, Գերմանիան ապացուցանում է, որ ինքը պատրաստվում էր պատերազմի և յարուցեց այն։

Զօրահաւաքը կատարվում է չափազանց աջող։ Շնորհիւ սիստեմի կատարելագործութեան, ամեն ինչ գործնականում իրականանում է արագ՝ նախագծված պլանով։ Ամբողջ մեխանիզմը գործում է շատ լաւ։

ԲԷԼՖՈՐ.—Բերվեցին գերված գերմանական օֆիցէրները։

ԺՕՆՇԷՐԻ.—Գերմանական պօրուչիկի թաղման ժամանակ ֆրանսիացի դրագունները զինուորական պատիւներ տուին։

Երբ Վէլէսկօ եկաւ գերմանացի մի օֆիցէր ձիեր հաւաքելու համար, նրան ստիպեցին իսկոյն փախուստի դիմել, իսկ ձիերը տարվեցին Բէլֆօր։

Մի քանի հարիւր էլզասցիներ խանդավառ ցոյցով մտան ֆրանսիական զօրքի մէջ։ Ցուցակագրվում են շատ շվէյցարացի և իտալացի հպատակներ։ Էլզաս-Լօթարինգիայի շատ բնակիչներ ժողովվել են սահմանագլխում՝ Ֆրանսիա անցնելու համար, որպէսզի կռուեն Ֆրանսիայի զօրքերի շարքերում։

ՊԱՐԻԶ.—Գերմանական դեսպանը պահանջեց արտաքին գործերի մինիստրութիւնից վերադարձնել անցագրերը։

Գերմանիայի պատերազմ յայտարարելու տեղեկութիւնը ընդունվեց բացագանչութիւններով ի պատիւ Ռուսաստանի և Ֆրանսիայի։

Զինուորական մինիստրը յայտնում է, որ Գերմանիայի առաջին թշնամական գործողութիւնը՝ Մէցում գոյութիւն ունեցող «Ֆրանսիայի Յիշատակը» ընկերութեան նախագահ Սամէնին գնդակահարելն էր և ընկերութեան բոլոր անդամների ձերբակալութիւնը։

Գերմանական դեսպանի յանձնած նոտայի մէջ գերմանական կառավարութիւնը յենվում է փաստերի վրա, որոնք ըստ էութեան ճիշդ չեն. օրինակ՝ իբր թէ ֆրանսիացի օդագնացները մտել են Բելգիա, իբր թէ նրանք թռիչքներ են կատարել Նիւրէնբէրգի վրա և այնտեղ ռումբեր նետել, իբր ֆրանսիական զօրքերը մի քանի տեղերում անցել են գերմանական հողը։

Գեներալիսիմուս Ժօֆֆրը մեկնեց արտասահման։

Պատգամաւորների պալատ։ Հասարակութեան համար յատկացված տեղերը լի են։ Դեսպան Իզվօլսկին դիւանագիտական ամբիօնումն է։ Պատգամաւորների մէջ երևում են շատ զինուորականներ։ Պատգամաւորները, հանդիսաւոր լռութեան մէջ, խիտ շարքերով դահլիճ են մտնում։

Դէշանէլը ճառ արտասանեց, գովելով վախճանված Ժօրէսին։ Ամենքը կանգնում են և ցնծագին ծափահարում են Դէշանէլի հետևեալ խօսքերը. «Այլևս հակառակորդներ չը կան, կան միայն ֆրանսիացիներ»։ Ճառը ընդունվեց «Կեցցէ Ֆրանսիան» բացագանչութեամբ։ Պատգամաւորները դիմում են Իզվօլսկին ի պատիւ Ռուսաստանի բացագանչութիւնով։ Պատգամաւորներից շատերը չեն կարողանում զսպել իրանց արտասուքը։

Սենատի նիստը չափազանց բազմամարդ էր։ Մինչև անգամ հիւանդ սենատորները ստիպել էին բերել իրանց դահլիճ։ Բրէնվիլնի. Մարտէնը կարդում է պրեզիդենտի կոչը։ Սենատի անդամները կանգնում են տեղերից բացագանչելով «Կեցցէ Ֆրանսիան»։ Հանրապետութեան պրեզիդենտը իր կոչի մէջ ասում է, որ Ֆրանսիան փոքր ինչ առաջ ենթարկվեց նախամտածված կոպիտ յարձակման, որ հանդիսանում է միջազգային իրաւունքի յանդուգն ոտնահարումն։ Մինչև պատերազմ յայտարարելը և մինչև դեսպանի մեկնելը գերմանական կայսրութիւնը խախտեց ֆրանսիական երկրի անձեռնմխելիութիւնը, մինչդեռ Ֆրանսիան կարող է հանդիսաւորապէս յայտնել, որ նա մինչև վերջին րոպէն ծայրայեղ ջանքեր էր գործ դնում պատերազմից խուսափելու համար, որի համար Գերմանիան սոսկալի պատասխանատու կըրեայ պատմութեան հանդէպ։ Գերմանիան պատերազմ յայտարարեց Ռուսաստանին, գրաւեց Լիւկսէմբուրգը, վիրաւորեց բէլգիական անվեհեր ազգին, փորձեց դաւաճանօրէն յանկարծակիի բերել ֆրանսիացիներին, դիւանագիտական բանակցութիւնների մէջ շփոթութիւն ձգել, սակայն Ֆրանսիան նոյնչափ արթուն է, որքան խաղաղասէր, և նրա գեղեցիկ, քաջարի զօրքը, ոտքի կանգնելով, կարող կը լինի պաշտպանել դրօշակի պատիւը և հայրենի երկիրը սկսվող պատերազմում։ Ֆրանսիայի կողմն է միջազգային իրաւունքը։ Ֆրանսիային հաւատարիմ կերպով օգնում են նրա դաշնակից Ռուսաստանը և Անգլիայի լօյեալ բարեկամութիւնը։ Ամեն կողմից տացվում է համակրանք, որովհետև այս անգամ Ֆրանսիան հանդիսանում է աշխարհի առաջ ազատութեան, իրաւունքի և խելացիութեան ներկայացուցիչ։

Պարիզում հանգիստ է։ Քաղաքը զարդարված է դրօշակներով։ Շատ կանայք եռեք գոյնի կոկարդներ են կրում։ Սրճարանները և ճաշարանները փակվում են երեկ. ժամը 8-ին։ Բօրսան հաւանօրէն բաց կը մնայ պատերազմի ամբողջ ընթացքում։

Պուանկարէն ընդունեց պրինց Ռոլանդ-Բոնապարտին և շնորհակալութիւն յայտնեց կառավարութեան անունից՝ իրան զօրքի շարքերում ընդունելու առաջարկն անելու համար, մատնանշելով որ ֆրանսիական օրէնքը թոյլ չէ տալիս Ֆրանսիայում իշխող դինաստիայի անդամներին ծառայել ֆրանսիական զօրքի մէջ։

Իտալիայի չէզոքութիւնը յարուցանում է խանդավառութիւն։

Մամուլը ուրախութեամբ հաղորդում է, որ թոյլատրված է ֆրանսիաբնակ ռուս պահեստի զինուորներին ծառայել ֆրանսիական զօրքում։

«Matin»-ը ներկայ պատերազմը անուանում է քաղաքակրթութեան սրբազան պատերազմ բարբարոսութեան դէմ։

Պատգամաւոր Լազիէսը նշանակվեց 27-րդ դրագունեան գնդի պօրուչիկ։

Գերմանիան յայտնել է բէլգիական կառավարութեանը, որ հաշւի չի առնի Բելգիայի պատասխանը իր ուլտիմատումի դիմաց։

Վիվիանիի հասցէին երկար օվացիաներ անելուց յետոյ, պալատը ձեռք բարձրացնելով ընդունեց այն օրինագիծը, որով յատկացվելու են անհրաժեշտ գումարներ ազգային ինքնապաշտպանութեան համար և որոնվելու են համապատասխան աղբիւրներ պահեստի զինուորների ընտանիքներին պահելու համար։ Բոլոր պատգամաւորները կանգնած ձայն են տալիս յօգուտ այն օրինագծի, որ իրաւունքներ է տալիս ֆրանսիացի քաղաքացիներ էլզասցիներին և լօտարինգցիներին, որոնք մտնում են ֆրանսիական դրօշակի տակ ծառայելու։ Այդ միևնոյն օրինագծերը ընդունվեցին նաև սենատից առանց վիճաբանութիւնների։

Ռուսական բանկերի բաժանմունքները դադարեցրին գործողութիւնները, սակայն ռուս կլիենտների շահերն ի նկատի ունենալով միջոցներ են որոնվում վերսկսելու մի քանի գործողութիւններ։

Պարիզում բնակվող ռուսների դրութիւնը չափազանց դժուարին է, որովհետև ֆրանսիական բանկերը չեն համաձայնում մանրել ռուբլին և վճարել չէկերը։

Կազմվեցին բազմաթիւ ազգային կոմիտէներ՝ ռուսական, անգլիական, իտալական, ռումինական և այլն։

## ՎԻՎԻԱՆԻԻ ՋԵԿՈՒՅՑՈՒՄԸ ՖՐԱՆՍԻԱԿԱՆ ՊԱՐԼԱՄԵՆՏՈՒՄ

Պարիզ, 22 յուլիսի

Պարլամենտ։ Վիվիանին կարդում է կառավարութեան յայտարարութիւնը՝ ըսկսելով այն հանգամանքների բացատրութիւնից, որոնք ստիպեցին խաղաղ, զօրեղ Ֆրանսիային պաշտպանվել յարձակումից, որի նպատակները Վիվիանին լուսաբանում է, և յիշեցնելով Սերբիային տրված ուլտիմատումի պայմանները, որ սուտ կերպով յայտարարում էր, թէ իբր սերբիական իշխանութիւնները մասնակից են Սարաեւօյի սարսափելի ոճրագործութեան, մինիստր-նախագահը հաստատում է, որ Աւստրիայի պահանջած գոհացումը հարուած հասցրեց Սերբիայի վեհապետական իրաւունքներին, որ սակայն համաձայնեց՝ Ֆրանսիայի, Ռուսաստանի և Անգլիայի խորհրդով՝ հնազանդվել առանց առարկութեան։ Այդ խորհուրդները աւելի թանգ էին նրա համար, որ Աւստրիայի պահանջները թագցվել էին եւրոպական համաձայնութիւնից, որին, ընդհակառակը, Աւստրիան խոստացել էր աւելի չափաւոր պահանջներ ուղղել։

Ապա Վիվիանին յիշեցնում է Գերմանիայի սպառնական առաջարկները Պարիզում, Լօնդօնում և Պետերբուրգում։ Չը նայելով այդ քայլերի տարականոն բնաւորութեան, Ֆրանսիան՝ Ռուսաստանի և Անգլիայի համաձայնութեամբ՝ փորձեց գործել հաշտարար ոգով։ Սակայն Գերմանիան ոչ միայն չը տուեց Աւստրիային բարեկամական խորհուրդներ, այլ, ընդհակառակը, կանգնեց Վիէննայի կաբինէտի և հաշտարար առաջարկների միջև։ Աւստրիան յայտարարեց պատերազմ Սերբիային՝ վտանգելով քաջարի ժողովրդի անկախութիւնը և այն հաւասարակշռութիւնը Բալկաններում, որ սահմանել է Բուխարէստի դաշնագիրը և նուիրագործված է մեծ-պետութիւնների բարոյական միացմամբ։ Այնուամենայնիւ եւրոպական համաձայնութիւնը փորձեց շարունակել բանակցութիւնները և առաջարկեց Անգլիայի, Ֆրանսիայի, Գերմանիայի և Իտալիայի միասնական միջնորդութիւնը այն նպատակով, որ Աւստրիային տրվի ամեն տեսակ արդարացի գոհացում։ Համոզվելով իբր փորձերի անաջողութեան մէջ և երկիւղ կրելով Սերբիայի ջնջման մասին, Ռուսաստանը վճռեց նախազգուշացուցիչ բնաւորութիւն ունեցող մասնաւոր զօրահաւաք կատարել։ Գերմանական ստատս-սեկրետարը չը կամեցաւ ճանաչել զօրահաւաքը այդ մտօքով։ Սակայն, այն դիտաւորեալ բացասական վերաբերմունքը, որին հանդիպում էր Բեռլինում Մեծ-Բրիտանիայի ամեն մի փորձը՝ ստեղծել համաձայնութիւն Աւստրիայի և Սերբիայի միջև, ցոյց տուեց, որ Գերմանիան յետին միտք ունի։ Գերմանիան մտցրեց զինուորական դրութիւն, որպէսզի ծածուկ շարունակէ զօրահաւաքը, և ուղարկեց ռուսաց կառավարութեանը ուլտիմատում, այնքան մանաւանդ վիրաւորական, որ մի քանի ժամ առաջ՝ ռուսաց կայսրը վստահութեան զգացումով դիմել էր գերմանական կայսրի միջնորդութեանը։ Միաժամանակ Անգլիայի և Գերմանիայի խնդրանօք՝ Ռուսաստանը ընդունել էր մի բանաձև, որ պատրաստում էր վէճի խաղաղ լուծումը և պատերազմական գործողութիւնների ու պատրաստութիւնների դադարեցումը։

Վիվիանին թւում է մի առ մի այն բազմաթիւ թշնամական ակտերը, որ արտայայտել է Գերմանիան Ֆրանսիայի վերաբերմամբ ֆրանսիական սահմանի վրա, շեշտելով, որ աւելի քան 15 կէտերում ֆրանսիական սահմանը խախտվել է։ Վիվիանին կարդում է ֆօն-Շէնի նամակը, որ հակառակ է ամեն ճշմարտութեան։ Այդպիսի յարձակման դէմ—բացատրեց Վիվիանին—Ֆրանսիան ընդունեց բոլոր անհրաժեշտ միջոցները, որոնց իրագործումը շարունակվում է կարգով և անհրաժեշտ պաղարիւնութեամբ։ Մինիստր-նախագահը յիշեցնում է այն եռանդը և ուղղութիւնը, որով կատարվում է ռուսական զօրահաւաքը, ինչպէս և Բելգիայում։ Յիշեցնում է նաև անգլիական նաւատորմի և Իտալիայի չէզոքութեան մասին։ Պալատը անընդհատ ծափահարելով Վիվիանիին, երբ յիշվեց Ռուսաստանի, Բելգիայի, Անգլիայի և Իտալիայի անունը, արտայայտում է իր ողջոյնները յոտընկայս։

Յիշելով Ֆրանսիայի և Ռուսաստանի խաղաղասէր և համաձայնութեան հակվող յարաբերութիւնները դէպի Մարոկկօյի անցքերը և բալկանեան պատերազմները, Վիվիանին վերջացնում է. «Գերմանիան յարձակվում է եւրոպական համաձայնութեան անկախութեան, արժանապատւութեան և ազատութեան վրա, որոնք ձեռք են բերված հաւասարակշռութիւն հաստատելով և խաղաղութեան ձգտումով»։

Յարձակվում է գործված Եւրոպայի ազատութեան վրա, որը պաշտպանում է Ֆրանսիային, նրա դաշնակիցներին և բարեկամներին։ Մնացած բոլորը—միայն առիթ է։ Ֆրանսիան պատերազմ չէր ցանկանում, բայց նա պէտք է պաշտպանվի ընդդէմ Գերմանիայի և այն մեծ պետութեան, որը կը կռուի Գերմանիայի հետ միասին։

## ԱՆԳԼԻԱՅՈՒՄ

(Պետերբուրգի Հեռ. Գործ.)

22 յուլիսի

ԼՕՆԴՕՆ.—Խռեռուն գործունէութիւն է տիրում զինուորական մինիստրութեան և ծովակալութեան մէջ։ Հրաւիրված են շատ գթութեան քոյրեր։ Ֆէլդմարշալ Ֆրէնչ այցելեց զինուորական մինիստրութիւնը։ Նաւատորմի շատ պահեստի զինուորներ մեկնեցին իրանց նշանակված տեղերը։

ԼՕՆԴՕՆ.—Ամբողջ մամուլը պաշտպանում է կառավարութեան վճիռը՝ օգնելու Ֆրանսիային և Բէլգիային։ Անգամ «Դէյլի-Նիւսը» մատնանշում է, որ Անգլիան պէտք է միութիւն պահպանէ, և հրաւիրում է սօցիալիստներին և ծայրայեղ արմատականներին չը խանգարել կառավարական գործողութիւնները։ «Թայմսը», «Դէյլի-Տելէգրաֆը» և «Մօրնինգ Պօստը» տալիս են ազդու յօդուածներ, պարսաւելով գերմանական գործելակերպը և յայտնելով որ պատերազմը Անգլիայի և Գերմանիայի միջև անխուսափելի է։ Վկայելով, որ Անգլիան միանգամայն պատրաստ է պատերազմի, լրագիրները նպաստաւոր կերպով են խօսում նաւատորմի զօրահաւաքի աջողութեան մասին, որ աւարտվեց մի գիշերում։

Թագաւորի նոր հրովարտակը. «Որովհետև Եւրոպայում արտաքին գործերի այժմեան դրութիւնը կազմում է անխուսափելի ազգային վտանգ, ուստի մենք խստագոյնս պատուիրում ենք մեր հպատակներին ենթարկվել այն կանոններին ու կարգադրութիւններին, որ հրատարակում ենք մենք և մեր ծովակալութիւնը, զինուորական խորհուրդը և զօրքին ու նաւատորմին վերաբերող հաստատութիւնները»։

Գերմանիային ուղղված ուլտիմատումը մեծ տպաւորութիւն թողեց։ Բազմահազար ամբոխները ողջոյնի բացագանչութիւններով ժողովվում են պարլամենտի և մինիստրութիւնների շուրջը։ Լօնդօնի կենտրոնական մասը անսովոր կերպով կենդանացել է։ Ամբոխը աղմկում է. էկսցէսներ չը կան։

Ծովակալ սըր Ժօն Ժէլլիկօն նշանակվեց մայր ցամաքի անգլիական նաւատորմի ընդհանուր հրամանատար։

Լորդերի պալատը ընդունեց բիւջէն առանց վիճաբանութիւնների։

Թագաւորը հրաման ստորագրեց ընդհա-

## ԲԱՆԱՍԻՐԱԿԱՆ

### ԴՈՒՆԱՅԵԱՆ ՅՈՒՑԿԱՊԱՐԻԿԸ

(Ն. Ն. Բրէշկօ-Բրէշկովսկիի)

(Սերբիական կեանքից)

III

Գնչուհին եկաւ։

Եւ այն էլ ոչ թէ եկաւ, այլ յայտնվեց յանկարծ, կարծես, ծնունդ առնելով կէսգիշերային դունայեան մառախուղի միջից։ Վերարկուն ուսերին ձգած, Կուրանդիչը սպասում էր նրան մուտքի առջև։ Մի ամբողջ ժամ էր սպասում էր...

Իսկ շուրջը աւելի ու աւելի էր խտանում մշուշը։ Ամենուրեք մեռելային լռութիւն էր տիրում։

Այդ մշուշի միջից դուրս սողաց յանկարծ Հիլդան, բոլորովին յաւերժահարսի նման։ Հագուստն էլ ամբողջովին թաց էր մշուշի խոնաւութեամբ...

— Տեսնում ես, արծուեկս, եկայ, չը խաբեցի... Հիլդայի խօսքն ամուր է...

Եւ այդ գողունի շշնջիւնի հետ միասին, նա գրկեց իր ճկուն բազուկներով Կուրանդիչի պարանոցը, հպվեց նրան։ Լէյտենանտը այրվում էր... Նա ձեռքերի վրա առաւ գնչուհուն և տարաւ նիրհող տնակը։

. . . . . . . . . . . . . . . .

Տանը, ուժասպառ թմրութեան մէջ, թալկացած, գլուխը դէպի ետ ձգած, մէջքի վրա պառկել էր Կուրանդիչը։ Նա կրճտացրեց ատամները... Երազում տեսնում էր նա, թէ ինչպէս ինքը մտնում էր Կումանովօ, և ալբանացիները իրանց տներից գնդակներ էին տեղում նրա դէմ։ Ընկերներից շատերը չը կային. նրանք ընկել էին արնաւաների դաւադիր գնդակների տարափի տակ։

Հիլդան՝ խաւարի մէջ իր նուրբ մերկ ուսերը վեր բարձրացրեց ու ցնցվեց։

Մի տեսակ ծանր սոսկում պատեց նրան կէս գիշերին ատամների այդ կրճտոցից... Ականջ դրեց. շնչառութիւնը հաւասար էր։

Գնչուհին շօշափեց իր շրջազգեստը, որն աթոռի վրայից ընկել էր յատակի վրա։ Ահա այն փոքրիկ սրուակը, որ ստացել էր բեխաւոր, բղդբղոտ ձեռքեր ունեցող մարդուց։

Խցանը հանելով, Հիլդան զգուշութեամբ մօտեցրեց սրուակը Կուրանդիչի քթին։ Այ այսպէս, մօտիկ... իսկ ինքը սառած մնաց տեղում։ Մատները դողդողում են. հայեացքը լայնացաւ ու կանգ առաւ։

Դանդաղում է Կուրանդիչի շնչառութիւնը... Հիլդան թագցրեց սրուակը։ Հրեց օֆիցէրի գլուխը, հպվեց նրա շրթունքներին իր սառած բերանով։ Գլուխը կախվեց, որպէս անկենդան...

Գնչուհու սարսափը պակասեց... սկսեց շտապով հագնվել, մի կերպ քօղով ամրացրեց խիտ մազերի հիւսերը։

Հիլդան լէյտենանտի առանձնասենեակումն է արդէն։ Վառեց մոմը... Դողդղուն կերպով քերթում է մոմը իր խղճուկ բոցը, պատերին հալածելով Հիլդայի յաղթանդամ ստուերը...

Բոլոր թղթերը նկարներով և հաշիւներով թագցրեց գնչուհին իր թաշկինակի մէջ։ Գրասեղանի արկղից հանեց այն բոլորը, ինչ որ թւում էր նրան արժէքաւոր։ Անմաքուր գծագրված կարտօնները, յուշատետրերը, բոլորը, բոլորը, բոլորը շտապով կողոպտում էր։ Գտաւ դրամի քսակը։ Աչքերը բոցբռկվեցին։ Տատանվելով, Հիլդան խրեց նրան իր լիֆի տակ, ճմլելով երկու բոլորովին նոր հարիւր ֆրանկանոց թղթերը... Տեսաւ ատրճանակը՝ փոքրիկ գրպանի «մաուզերը», նա էլ վեր առաւ...

Հանգարտ, անշշուկ բաց արեց պատուհանը։ Ոչ ոք չը կար։ Միայն խոնաւ, շարագուշակ մշուշը սողաց դէպի առանձնասենեակը։ Փչեց ու հանգցրեց մոմը...

Հիլդան չքացաւ մշուշի մէջ իր աւարով միասին...

Ժպտալով, դեռ ևս բոլորովին քնաթաթախ, պարզեց Կուրանդիչը իր ուժեղ, ջլոտ բազուկները, կարծելով որ կը հանդիպէ Հիլդայի գրկախառնութեանը... Բայց, բանալով աչքերը, նա փոխարէն չգտաւ, և աչքերով զարդարված դէմքի՝ տեսաւ իր զինուոր ծառայի նիհար, վախեցած դէմքը... Զինուորը չէր կարողանում զարթեցնել լէյտենանտին։

— Ի՞նչ է պատահել։

— Մեզ կողոպտել են։

Օֆիցէրը շտապով շտապեց առանձնասենեակը... Խառնափնթոր... Սեղանի արկղը բաց է արված... Թղթերը, նկարները, կարտօնները չքացել են։ Բաց արված պատուհանից քնքոյշ ու անվրդով ցնծութեամբ դիտում էր անխռով արեւշատ առաւօտը...

Լէյտենանտը դողում էր կատաղութիւնից...

Իսկ զինուոր ծառան կշտամբանքով օրօրում է գլուխը։ Նա տեսել էր գնչուհուն ցերեկով պատուհանից ցած թռչելիս և գլխի էր ընկել, թէ ինչումն էր բանը։

Կուրանդիչի առաջին շարժումն էր գնալ ոստիկանատուն, յայտնել եղելութիւնը, իսկ յետոյ անձամբ որոնել այն դաւաճան գնչուհուն... Բայց դիւրին է ասել... Որոնիր քամին դաշտում։

Դեռ հազիւ էր կարգի բերել Կուրանդիչը՝ իր ծառայի հետ միասին՝ կողոպտված առանձնասենեակը, երբ պատուհանի առջևից երևաց սերբիական հեծելազնդի օֆիցէրի բարձր ու փարթամ կերպարանքը։

Գահաժառանգի ադիւտանտն էր նա...

— Ի՞նչ է պատահել քեզ,—հարցրեց ադիւտանտը կիսահագնված, մաշը ու նիհարած դէմքով Կուրանդիչին։

Լէյտէնանտը պատմեց պատահած դժբաղդութեան մասին, լռութիւն պահելով, սակայն, թէ ով էր կողոպտել իրան։

— Գիտես, բարեկամս, դա բոլորովին անժամանակ եղաւ,—պատասխանեց անհաճոյաբար ադիւտանտը։—Ես այս րոպէիս գալիս եմ գահաժառանգի մօտից։ Նորին բարձրութիւնը յանձնարարեց ինձ յայտնելու, որպէսզի դու վաղը առաւօտեան ժամը 8-ին լինես իր մօտ քո բոլոր պարագաներով։ Գահաժառանգը շտապում է Ուսկիւբ և քօ զեկուցումը հարկ եղաւ շտապեցնել։

Կուրանդիչը մեղապարտի պէս կանգնել էր անխօս։

Ադիւտանտը մտախոհ կանգնել էր, սրին յենված։

— Այո... վատ բան դուրս եկաւ։ Քեզ կողոպտել են աւստրիական լրտեսները։ Սակայն դրանով ցաւը չի թեթևանում։ Քո մատուցած բոլոր ռազմական ծառայութիւնները կարող են ջնջվել... Այ թէ ինչ։ Մինչև վաղը դեռ կայ մի ամբողջ օր ու գիշեր։ Ով գիտէ, հրաշքներ կարող են պատահել... Ես կասեմ նորին բարձրութեանը, որ դու վաղը կը լինես, և ոչինչ չեմ ասի պատահարի մասին։ Ձեռքդ ժողովիր քեզ, լարիր բոլոր ոյժերդ, որոնիր, գտիր...

Ադիւտանտը դուրս գնաց, շպօրները զնգզնգացնելով, թողնելով Կուրանդիչին այնպիսի լքման մէջ, որ խեղճը քիչ էր մնում՝ ինքնասպանութիւն գործէր։

IV

Դարձեալ գիշեր է... Ու դարձեալ նոյն խիտ մշուշը...

Քաղաքից դուրս ինչ-որ ֆանտաստիքական սիլուէտներով դէս ու դէն են շարժվում գետափին ձիաւորներ։ Դրանք սահմանապահ գնդի զինուորներն են, որ կատարում են իրանց գիշերային շրջագայութիւնը։ Այդ դիւական մշուշը մաքսանենգների լաւագոյն ընկերն է և պատսպարողը...

Երեք ձիաւոր, աշխատելով աղմուկ չը հանել իրանց սրերով ու հրացաններով, շշնջում են իրար հետ։ Քիչ հեռու հողաբլրի ստորոտում ճիշդ գետափի մօտ նրանց ականջին ինչ-որ ծփանքի ձայն լսվեց... Կարծես մակոյկ էին թիավարում։ Սահմանապահները ուշադրութիւն դարձրին, երկու երեք անգամ ձայն տուին... Պատասխանը եղաւ նոր՝ աւելի զգոյշ ճողփիւն թիերի։ Գնդակ արձակելն անպատակ էր, մութը չունէր։ Բան չէս տեսնի մութ վարագոյրի միջից։

Սահմանապահները «հաւաքելով» իրանց ձիերը, նրանց հետ միասին ցած սահեցին բլրակի զառիվայրից և թափվեցին ուղղակի Դունայի մէջ։ Ենթարկելով իրանց կեանքը խեղդվելու կամ արագ հոսանքին զոհ գնալու վտանգին, զինուորները լող տալով հետամուտ եղան փախչող մակոյկին։ Նրանք արդէն նշմարում էին նստած թիավարող մենաւոր մարդուն։

Նա, որ իր հիմքն ունէր չը պատահելու սահմանապահ զինուորներին, թիավարում էր որքան որ ոյժ ունէր։ Մակոյկի և լող տուող ձիաւորների միջև եղած տարածութիւնը գնալով մեծացաւ...

Որոտացին գնդակները... Նորից ու նորից... Զինուորները շտապով դատարկում էին իրանց «մանլիխերները» դէպի հեռացող մակոյկը։ Վերջապէս մենաւոր մարդը գլորվեց, բաց թողնելով թիերը... Տեղն ու տեղը պտտվում էր մակոյկը։ Երբ ձիաւորները հասան, մակոյկի յատակի վրա ընկած էր գնդակահար եղած բեխաւոր մարդու արիւնոտ մարմինը։

Սահմանապահները, հրելով մակոյկը իրանց ձիերի կրծքով, դժուարութեամբ հասցրին նրան ափը։ Հենրիխ Ալբերտօվիչի դիակի հետ միասին, սահմանապահները մակոյկի միջից հանեցին մի փոքրիկ տափակ պայուսակ, որի մէջ գտնվեցին այն դօկումենտները, որը գողացել էր Կուրանդիչի մօտից գնչուհին։

Հետևեալ առաւօտ լէյտենանտը տուեց իր զեկուցումը գահաժառանգ Ալէքսանդրին, աջողութիւն ունեցաւ, և նրան խոստացան ամենամօտ ապագայում շտաբս-կապիտանի աստիճանը տալ։

Իսկ Հիլդա՞ն։

Անհետ չքացաւ նա. կարծես հէքիաթի մէջ լինէր... Եւ խակայէս որ դունայեան մշուշների ծնունդ յուշկապարիկ չէր նա արդեօք։

Ի՞նչպէս իմանալ... Աշխարհումս անկարելի ոչինչ չը կայ...

Լ. Դանիէլեան

